Հուսիկ Արա

Բախիր՝ կբացվեմ

Սերը քո հայացքն ունի հիմա,
ճիշտ քո քաշով ու հասակով է.
հենց այդ տեսքն եմ ուզում պատմել
ոչ թե աշխարհին կամ ուրիշ մեկի,
ուղղակի քեզ, իմ ամենաաղջիկ,
որովհետև չգիտես այն, ինչ ես գիտեմ քո մասին:

Սերը չի տեսնում,
աչքեր չուներ հենց սկզբից,
պատկերացնում է միայն,
բայց միտք չունեմ հորինել կամ հավելել ինչ-որ բան.

դու իմ կյանքն ես, ու թե հանկարծ մահս դառնաս,
զուցե զարմանամ, թե ինչ չքնաղ է մահը,
ու մեռնեմ առանց երկմտելու:
Իմ սկիզբն ես
և իմ վերջն ես դու.
ձայն տուր՝ կշրջվեմ,
բախիր՝ կբացվեմ,
ցանկացիր՝ կունենաս ինձ.
չէ՞ որ դու սերն ես:

Ճակատագրիս վերջին էջն եմ կարդում.
չեն խաչվելու մեր ուղիները երբեք,
ու չեն փաթաթվելու մեր ոտքերն իրար:
Ես դիտորդն եմ ու հսկիչը քո սիգաճեմ ընթացքի,
բայց այնպես խաղաղ եմ ու հանգիստ՝
քո բոլոր մանրամասներով մինչև վերջին բջիջս հագեցած:
Այդպես մեկ անգամ է անցնում սերը՝ լիաշունչ ու մերկ,
որ քոնն է ամբողջովին ու բոլորովին քոնը չէ,
ինչպես Աստված է ամպի տեսքով երկնքում:

Գիտեմ, դու էլ կին ես,
քո գաղտնիքն ունես և աշխարհը ավերված
ու երբեմն էլ պոռնիկ ես սովորական,
բայց ես ասում եմ՝ Աստված սեր է և այդ սերը դու ես: